ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<<29>> << նոյեմբեր>> 2016 թ N 134

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի նոյեմբերի 1-ի N02/02.17/377630-16 հանձնարարականի 3.2-կետը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն մինչև 2017 թվականի հունվարի 15-ը ներկայացվող ՀՀ Վայոց ձորի մարզի /այսուհետև՝ Մարզ/ 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը մշակելու նպատակով աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետի գլխավորությամբ ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբին՝ ամենօրյա հետևողական աշխատանքով, հաշվի առնելով Մարզի առանձնահատկությունները, մշակել Մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը, հատուկ ուշադրություն դարձնելով լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման, կրթական և մասնագիտական կատարելագործմանն ուղղված միջոցառումներին (մասնավորապես՝ գյուղատնտեսության ոլորտում):
3. Աշխատանքային խմբին յուրաքանչյուր տասնօրյակ ներկայացնել նիստեր, ամփոփել կատարածը և նախանշել անելիքները:
4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2016 թվականի նոյեմբերի 28-ի
N կարգադրության

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի 2017-2025 թվականներին զարգացման ռազմավարությունն մշակող աշխատանքային խմբի անհատական կազմը

Խմբի ղեկավար՝

Կոստանյան Արամ -աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ,

Քարտուղար՝

Ղազարյան Փառանձեմ -աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ

Անդամներ՝

1. Մինասյան Ռուբիկ -աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
2. Բաբայան Ցողիկ -առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ
3. Խաչատրյան Գոհար -գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ
4. Հախվերդյան Ռուզաննա -ֆինանսական և սոց.-տնտ.զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ
5. Հովհաննիսյան Վարդան -ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության գլխավոր մասնագետ
6. Գաբրիելյան Ավագ -կրթության , մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
7. Ասատրյան Հրայր -զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր մասնագետ
8. Ավետիսյան Հասմիկ -ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [illegible] ՍԱՀԱԿՅԱՆ